

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՑԱՐԱՆԻ

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Մ. Արքեպոս. Տէրտէրեան
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյ

Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ձերդ Ամենապատուութեան հայրական հովանիին տակ, Ժառանկաւորաց Վարժա-
րանք և Ընծայարանը ահաւասիկ կը բո-
լորէ տարի մը ևս, տարի մը՝ որ իրաւամբ
կրնանք ըսել թէ արդիւնաւոր եղաւ:

Տեսչութիւնս և ուսուցչական կազմը
տարեկիզրի իրենց առաջադրութեան հա-
մաձայն, կտրելին շինականներն՝ որպէսզի և
շակերտները աճին մարմնով, մտքով և հո-
ղիով, և ջանան այժմէն իսկ իրենք զիրենք
կառավարել, վարժուելով կարգապահու-
թեան և կանոններու պահպանման:

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԿԱԶՄ

Ներկայ տարեշրջանի մեր ուսուցչական
կազմը կը բաղկանար 18 անձերէ, 7 եկեղե-
ցական և 11 աշխարհական:

Ձերդ Ամենապատուութիւնը
Գերշ. Տ. Նորայր Եպոս.
Գերշ. Տ. Շահէ Եպոս. (Վերատեսուչ)
Հոգշ. Տ. Ներսէս Վրդ.
Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ.
Հոգշ. Տ. Սամուէլ Արդ.
Հոգշ. Տ. Արշէն Արդ. (Փոխ-Տեսուչ)
Տիար Պետրոս Լէփէճեան
Տիար Սահակ Գալայճեան
Տիար Վահէ Գալայճեան

Տիար Արայ Գալայճեան
Տիար Հրանդ Նազդաչեան
Տիար Սուլէյման Մասսիս
Տիար Յակոբ Տէմիրճեան
Տիար Յակոբ Մնացականեան
Տիար Պերճ Չէքիճեան
Տիար Յակոբ Մէնէշեան
Տիար Տիգրան Սթամպուլեան

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ

1967-68 դպրոցական տարեմուտին,
Վարժարանս վերաբացուեցաւ 16 աշա-
կերտներով, որոնց շուշացան միանալ 22
նորեկ աշակերտներ: Կատարուած քննու-
թիւններու իբր արդիւնք, կազմուեցան կա-
նոնաւոր 5 և մասնաւոր 1 դասարաններ՝
հետեւեալ բաժանումներով և դասաւարտ-
բով:—

Ընծայարան Գ — 4 աշակերտ

Ընծայարան Ա — 6 աշակերտ

Ներածութիւն Հին Կտակարանի
Ներածութիւն Նոր Կտակարանի
Աստուածաբանութիւն
Ընդհ. Եկեղեցւոյ Պատմութիւն
Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն
Քարոզախօսութիւն
Գրաբար
Հայ Մատենագրութիւն
Հայ Գրականութիւն
Պատմ. Իմաստասիրութեան
Անլիլիւրէն
Անգլիական Գրականութիւն
Եկեղեց. և Եւրոպ. Երաժշտութիւն

ժառանգաւորաց Գ — 7 աշակերտ

Կրօն

Թուարանութիւն

Գրահաշիւ

Երկրաչափութիւն

Գիտութիւն

Աշխարհագրութիւն

Պատմութիւն Հայոց

Գրաբար

Հայերէն Աշխարհաբար

Արարեբէն

Անգլերէն

Եկեղեց. եւ Եւրոպ. Երաժշտութիւն

Մարզանք

ժառանգաւորաց Ա — 11 աշակերտ

Նախապատրաստական — 6 աշակերտ

Նոյն դասանիւթերը ինչպէս ժառանգաւորաց Գ-ը, բացի Գրահաշիւէն եւ Երկրաչափութենէն :

Մասնաւոր Դասարան — 4 աշակերտ

Հայերէն Աշխարհաբար

Հայոց Պատմութիւն

Թուարանութիւն

Գիտութիւն

Աշխարհագրութիւն

Եկեղեց. եւ Եւրոպ. Երաժշտութիւն

Մարզանք

ԱՐՏԱՌԱՍԱՐԱՆԱՅԻՆ

Յիշեալ դասանիւթերուն կանոնաւորաբար հետեւելէ զատ, մեր աշակերտները կամաւորապէս մասնակցած են նաեւ զընթացիկութեան դասերուն : Պարտք կը զգամ հոս գոհունակութեամբ յիշել որ մեր աշակերտները, անկախ դասանիւթերէն, անձնը իրարաբար կատարած են նաեւ իրենց եկեղեցական պարտականութիւնները՝ կանոնաւոր կերպով մասնակցելով ամենօրեայ պաշտամունքներուն եւ Ս. Տեղեաց մէջ կատարուած արարողութեանց :



Ժառնգ. Վարժարանի եւ Ընծայարանի 1967-68 տարեշրջանի ուսուցչական կազմը եւ ուսանողութիւնը :

Մեր պայմաններում ներած չափով կը ջնանք բարելաւ վիճակի մէջ պահել նաեւ աշակերտներու ֆիզիքական եւ առողջական վիճակը: Գոհունակութեամբ կրնանք յիշել դարձեալ թէ ամբողջ տարեջրմանի ընթացքին չենք ունեցած հիւանդութեան որեւէ ծանր պարագայ: Այս ուղղութեամբ կարեւոր դեր կատարած են ամենօրեայ մարզանքները, որոնց հետեւած են մեր աշակերտները պատրաստակամութեամբ եւ սիրելով: Մարզական կեանքը առաջ գացած է առաջնորդութեամբ մարզիչ ուսուցչին. ունեցանք ֆութպոլի մի քանի մրցումներ քաղաքիս այլ վարժարաններուն հետ, որոնց մէջ մեր աշակերտները փայլուն արդիւնք ձեռք բերելէ դատ՝ ցոյց տուին նաեւ մարզական բարձր ոգի:

ՁեռնԱՐԿՆԵՐ

Դասաւանդութիւններէն անկախ, աշակերտներու բարոյական եւ իմացական կրթութեան համար կատարուած են հետեւեալ ձեռնարկները.—

1. Ուսուցիչները շարաթը անգամ մը հերթով, բարոյաստութիւն կատարած են, իւրաքանչիւրը ինք ընտրելով իր նիւթը:

2. Երաժշտութեան ունկնդրութեան համար օգտադործեցինք մեր ունեցած ռաւտիֆօնօկրաֆը, որուն միջոցաւ աշակերտներ իրենց ազատ ժամերուն առիթը ունեցան ունկնդրելու հայկական եւ դասական երաժշտութեան լաւագոյն եւ ընտրովի նմուշներ:

3. Պարբերաբար ցուցադրուեցան կրթական եւ պատմական ֆիլմեր: Ամառուան արձակուրդի ընթացքին կը ծրագրենք շարաթական ֆիլմի ցուցադրութիւն:

4. Կատարած ենք երեք պտոյտներ դէպի Տիբերիոյ Լիճը եւ չրջակայի պատմական

վայրերը, դէպի Երեբովի աւաղանը եւ դէպի Մեռեալ Ծով: Զերդ Ամենապատուութեան քարեհաճ կարգադրութեամբ յառաջիկայ արձակուրդին կ'ունենանք նաեւ շարաթական մեր պտոյտները:

5. Ուսումնական տարեջրմանին ընթացքին, Վարժարանիս ուսանողութիւնը մաս առած է Կաղանդի Հանդիսութեան յայտադրին: Յաջող կերպով ներկայացուցինք Զերդ Ամենապատուութեան հեղինակած «Վարդանանք» հնգարար թատերախաղը Հայ Երիտասարդաց Միութեան արահին մէջ, հոժ բազմութեան մը ներկայութեան: Նախաձեռնողը եղանք նաեւ Ապրիլ 24-ի Յուշատօնի հանդիսութեան: Այս առթիւ պարտք կը դգամ շնորհակալութիւն յայտնել զաղութիւն երկու Միութիւններուն, որոնք սիրայօժար կերպով ընթացք տուած են մեր զանազան դիմումներուն:

6. Կանոնաւոր կապ պահած ենք աշակերտներու ծնողներուն հետ, տեղեակ պահելու համար զիրենք իրենց զաւակաց կրթական եւ բարոյական վիճակին:

Ամփոփ այս տեղեկագիրը փակելէ առաջ, եւ օգուտ քաղելով այս հանդիսաւոր առիթէն, հրապարակաւ շնորհակալութիւնս կը յայտնեմ մեր ուսուցչական կազմին, որ նուիրումով եւ դիտակցութեամբ իր կարելին չխնայեց առաւելագոյն չափով օգնելու կրթական մեր այս նուիրական գործին:

Մեծագոյն պարտք ունիմ սակայն աղօթելու Աստուծոյ, որ անպակաս ընէ Զերդ Ամենապատուութեան հովանին մեր վրայէն, պարգեւելով Զեղի երկար եւ քաջառողջ կեանք, որպէսդէ Զեր Հայրական խընամբին եւ հողածութեան տակ կարենանք բոլորել աւելի՛ յաջող եւ արդիւնաւէտ տարիներ, ի փառս Աստուծոյ եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ ի պայծառութիւն Ս. Աթոռին:

ԱՐՇԵՆ ԱՐԿ. ԱՅՎԱԶԵԱՆ
Փոխ-Տեսուչ

15 Յունիս 1968

Ս. ԱՌՈՌ